Սարավան

Բնակչության թիվը՝ 291

Սարավանը վերաբնակեցվել է 1988թ-ին։ Նախկինում՝ 781թ-ին Սարավան գյուղի տարածքում է գտնվել Թերփ բնակավայրը։ Գյուղի տարածքում կան հին խաչքարեր և գերեզմանաքարեր։ 1988թ-ից գյուղը բնակեցվել է երիտասարդ ընտանիքներով։ Այն կազմված է երեք բնակավայրերից՝ Սարավան, Սարալանջ և Ուղեձոր
Սարավան գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1600 մ բարձրության վրա։

Լեռնային գյուղ է, շրջափակված է գեղեցիկ անտառներով։ Համայնքի տարածքով է անցնում Երևան-Մեղրի միջպետական մայրուղին, որի աջ և ձախ կողմերում են գտնվում Սարավան և Սարալանջ գյուղերը։

Հեռավորությունը մարզկենտրոնից 35 կմ է, Վայք քաղաքից՝ 18կմ։ Համայնքը սահմանակից է Վայոց ձորի մարզի Արտավան, Գնդեվազ և Սյունիքի մարզի Գոռայք համայնքներին։

Գյուղում հիմնվել են նոր այգիներ, բնակչության մեծ մասն զբաղվում է անասնապահությամբ։

Գյուղում գործում է դպրոց և բուժկետ։